ԺԸ

ՔՐԻՍՏՈՍԻ ԸՄԲՌՆՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՄԷՋ

Աւետարանիչները կը պատմեն թէ (Մատթ. ԻԶ. 36–50, Մարկ. ԺԴ. 32–46, Ղուկ. ԻԲ. 37–50, Յովհ. ԺԸ. 1–3) մեր Տէրը իր վերջին ընթրիքէն յետոյ գնաց Գեթսեմանի գիւղը իր աշակերտներով, որոնց ըսաւ որ հսկեն հոն, մինչև որ ինքն երթայ աղօթքը ընելու, իր հետ առնելով Պետրոսը և Զեբեդեայ երկու որդիները։ Յիսուս սկսաւ տրտմիլ և հոգալ, և կ'ըսէ անոնց ալ թէ «տրտում է ոգի իմ մինչև ի մահ»։ Ան քիչ մը առաջ կ'երթայ Զիթենեաց պարտէզ ըսուած տեղը և հոն աղօթելով կ'ըսէ. «Հա՛յր, եթէ կամիս անցո զբաժակս զայս յինէն, բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցի». երեք անգամ Յիսուս կու գայ աշակերտներուն մօտ և զանոնք քնացած կը գտնէ, երեք անգամ ալ կը յորդորէ որ արթուն մնան ու փորձութեան չենթարկուին, ու յետոյ կը յարէ «հոգիս յօժար է, բայց մարմինս տկար». երկրորդ և երրորդ անգամ կատարուած աղօթքէն յետոյ կը խօսի անոնց համանման խօսքեր։ Ի վերջոյ, կ'ըսէ աշակերտներուն թէ «ննջեցէք այսուհետև և հանգերուք զի ահա հասեալ է ժամ և որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց»։ Տասներկուքներէն մին՝ Յուդա Իսկարիովտացին Յիսուսը կը մատնէ թշնամիներուն, և անոնք ալ կալանաւորելով զայն կը տանին Կայիափայի մօտ դատելու և դատապարտելու համար։

Զիթենեաց պարտէզի մէջ այդ տագնապի պահուն, ինչպէս կը գրէ Աւետարանիչը, երկինքէն հրեշտակ մը երևցած էր Յիսուսի և քաջալերած էր զայն, երբ «հոսէին ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան, ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր»։

Յիսուսի՝ մեր Տիրոջ մահուան տագնապի ու Հօրը ուղղուած սրտառուչ աղօթքներուն՝ հանդիսավայրը եղող այս տեղերը, շատ կանուխէն բարեպաշտ քրիստոնեայք սրբացուցած և հոն ուխտատեղիներ շինած էին։ Գեթսեմանիի մէջ քրիստոնէական առաջին դարերէն սկսեալ ցոյց կը տրուին վերջին գիշերը Փըրկ-